Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-011[1]-31.05.2017-ՊԻՄԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի թիվ ՀՕ-295 օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասում «տարածքներ)» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ հարեւանների ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող պարսպի կամ այլ բաժանագծի» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի փետրվարի 1-ին:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Աժ առաջին ընթերցմամբ ընդունված «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» *Կ-011[1]-31.05.2017-ՊԻՄԻ-011/1* օրենքի նախագծում կատարված փոփոխությունների և լրացումների վերաբերյալ

Առաջին ընթերցում

Կ-011[1]-31.05.2017-ՊԻՄԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի թիվ ՀՕ-295 օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասում «տարածքներ)» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ հարեւանների ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող պարսպի կամ այլ բաժանագծի» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի փետրվարի 1-ինպաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: